



«Ղադարեցրեք այս թւոյնի առևտուրը»: ՀԿ-ները պահանջում են խիստ սահմանափակումներ սնդիկի գործածութեան նկատմամբ

Բոյունել, Մադիսոն, Վաշինգտոն, 31 հունվարի 2007թ.

Հակասնդիկային քաղաքականութեան պաշտպանները, 2007թ. փետրվարի 5-9-ը Նայրոբիում Միացյալ ազգերի շրջակա միջավայրի ծրագրի Ղեկավար խորհրդի (UNEP GC) կայանալիք 24-րդ հանդիպման ժամանակ իրենց կառավարութիւններից պահանջելու են արգելել սնդիկի արտահանումները և կրճատել համընդհանուր սնդիկային աղտոտվածութիւնը: «Այժմ կառավարութիւնները պետք է ընդունեն խիստ և պարտավորեցնող կանոններ սնդիկային աղտոտվածութիւնը կրճատելու նպատակով», - նշել է «Զրոյան սնդիկ» կոալիցիայի ներկայացուցիչ Ելենա Լիմբերիդին: «Սնդիկը թունավորում է ուղեղը և սպառնում մեր և ապագա սերունդների առողջութեանը՝ թե բարձր, թե ցածր մակարդակներով ազդելու դեպքում: Հետևաբար, Ղեկավար խորհրդի այս որոշումը պետք է ունենա ամուր հիմք համընդհանուր գործողութիւնների ապահովման համար»:

Համաձայն Միացյալ ազգերի շրջակա միջավայրի ծրագրի սնդիկի առևտրի մասին նոր զեկույցի, UNEP-ի «Սնդիկի գլոբալ գնահատման զեկույցին հաջորդող 5 տարիների ընթացքում սնդիկի գործածութիւնը ողջ աշխարհում չի կրճատվել նշանակալի չափերով: Անցած տասնամյակում սնդիկի առևտուրը կազմել է 3500 տոննա: Որքան նվազում է սնդիկի օգտագործման չափը զարգացած երկրներում, այնքան ավելի մեծ չափերով են զարգացող երկրները կախում ունենում այդ թունավոր մետաղից: Օդի աղտոտվածութեան փորձագետները նաև զեկույցում են, որ սնդիկի գլոբալ մթնոլորտային արտանետումներն ավելացել են վերջին 15 տարիների ընթացքում»:

«Միացյալ ազգերի շրջակա միջավայրի ծրագրի Ղեկավար խորհուրդը սնդիկը, որպես լուրջ գլոբալ սպառնալիք, առաջին անգամ սահմանել է շուրջ 6 տարի առաջ», - ասաց Սնդիկային քաղաքականութեան ծրագրի ներկայացուցիչ Մայքլ Բենդերը, - Այդ ժամանակից ի վեր այն աջակցել է էքստենսիվ հետազոտութիւններին, որոնք բոլորն էլ հանգեցնում են մեկ եզրակացութեան՝ անհրաժեշտ է անհապաղ նախաձեռնել լուրջ, համաձայնեցրած գլոբալ գործողութիւններ՝ սնդիկի մակարդակները շրջակա միջավայրում կրճատելու և ձուլը, որպես աշխարհում սպիտակուցների կենսունակ աղբյուր, պաշտպանելու համար»:

Հակասնդիկային քարոզարշավի մասնակիցները կարծում են, որ վերջին 2 տարիներին արձանագրված ձախողումների հիմնական պատճառը եղել է այն, որ կառավարութիւններն աջակցել են միայն կամավոր «համագործակցային» ծրագրերին, փոխանակ պաշտպանելու բազմակողմանի, օրենքով պարտավորեցնող համաձայնագիրը՝ անհրաժեշտ ֆինանսական օժանդակութեամբ և սնդիկի գործածութեան կրճատման պարզորոշ նպատակներով: Պաշտպանները պնդում են, որ գլոբալ, պարտավորեցնող համաձայնագրերը աշխարհում սնդիկի կրճատմանը հասնելու միակ ուղին են:

«Կառավարութիւնները՝ անհապաղ և բազմանշանակալից գործողութիւնների դիմելու իրենց պարտավորվածութիւնը պետք է ապացուցեն՝ օրենքով պարտավորեցնող բազմակողմանի համաձայնագրեր ընդունելու միջոցով», - ասաց Հարավային Աֆրիկայից Ռիկո Յուրիփիդոն, - Ներկա միջոցառումների շրջանակները և ուղղութիւնը շատ սահմանափակ են և, ինքնուրույն վերցրած, բավարար չեն սնդիկի ազդեցութեան վտանգները նվազեցնելու համար»:

ՀԿ-ներն առաջարկում են սնդիկի գլոբալ կրճատմանը հասնել.

1. Անմիջապես սկսելով աշխատանքները սնդիկի գործածությունն արգելող գլոբալ պարտավորեցնող ակտի մշակման ուղղությամբ
2. Օգտագործելով UNEP-ի առևտրային զեկույցներում գետեղված հայտնաբերումները
3. Կրճատելով սնդիկի գլոբալ պահանջարկը, նպատակ դնելով կրճատել այն 70 %-ով մինչև 2017 թ., դադարեցնելով սնդիկի օգտագործումը էլեկտրոնիկայում, կլոր մարտկոցներում, աստիճանաբար կրճատելով քլոր-հիմնային գործընթացները, մինչև 2017թ. կիսով չափ պակասեցնելով տնայնագործական և փոքրածավալ ոսկու արդյունահանումը, վերացնելով սնդիկի օգտագործումը հանածոների մշակման գործընթացներում և այլ գործնական միջոցառումներում
4. Հանձնարարելով UNEP-ին՝ մշակել սնդիկի մթնոլորտային արտանետումների մասին զեկույց Ղեկավար խորհրդի հաջորդ հանդիպման համար, որպեսզի ստեղծվի հիմք՝ սնդիկի արտանետումների գլխավոր աղբյուրների կրճատման նպատակները սահմանելու համար:
5. Կրճատելով սնդիկի մատակարարումը՝ հիմնական արդյունահանումը դադարեցնելու միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ սնդիկը հանդես է գալիս որպես այլ հանածոների մշակումից ստացված կողմնակի արդյունք, նաև սահմանփակելով զարգացած երկրներից սնդիկի արտահանումները, ինչպես նաև կառավարելով սնդիկը քլոր-հիմնային գործընթացներ կիրառող արտադրությունները փակելուց հետո
6. Ջարգացած երկրների կողմից զարգացող երկրներին նոր, լրացուցիչ ֆինանսներ տրամադրելով՝ վերոհիշյալ գործունեությանը աջակցելու նպատակով:

Սնդիկն ուղեղի և կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող ուժեղ թույն է: Սնդիկի ազդեցությանը ենթարկված բանվորները, օր. փոքրածավալ ոսկու արդյունահանողները, հաճախ են տառապում դողերոցքից, հիշողության կորստից և այլ նյարդաբանական խախտումներից: Մեթիլ սնդիկով աղտոտված սննդի պատճառով ամենից շատ վտանգված է նորածինների և մանկահասակ երեխաների առողջությունը: Ամենից խոցելի է պտղի ուղեղը: Ամենաբարձր ռիսկի խմբերին են պատկանում երիտասարդ կանայք, հղիությունից առաջ և դրա ընթացքում, եթե սնվում են մեթիլ սնդիկի բարձր մակարդակներ պարունակող ձկնատեսակներով (օր.՝ շնածուկ, թրածուկ, թագավորական սկումբրիա, թյուննոս ձկան որոշ տեսակներ), նաև ոսկու արդյունահանողները:

Նշումներ խմբագիրների համար

2002 թ. UNEP-ի Սնդիկի համընդհանուր գնահատման զեկույցի վերջում նշվում է. «Չնայած տվյալների բացթողումներին, բավարար հասկացողություն է ձեռք բերվել սնդիկի վերաբերյալ (ներառյալ՝ գիտելիքներ սնդիկի, դրա տեղափոխման, առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու գործունեության դերի մասին), հիմնվելով շուրջ կեսդարյա էքստենսիվ հետազոտությունների վրա՝ չհետաձգելու համար սնդիկի համընդհանուր հիմնախնդրի լուծմանն ուղղված միջազգային գործողությունները»:
(GMA, key findings, #35, see: <http://www.chem.unep.ch/Mercury/Report/Key-findings.htm>).

Ավելի մանրամասն տեղեկատվության համար կարող եք դիմել

Elena Lymberidi, European Environmental Bureau : Tel: +32 (0)2 2891301 ;
 Mobile : +32 (0)496 532818 ; elena.lymberidi@eeb.org, www.zeromercury@eeb.org
 Michael Bender, Mercury Policy Project : Tel: +1 802 249-8543 ; Email : ,
www.mercurypolicy.org
 Linda Greer, Natural Resources Defense Council, Tel: +1 202 289 6868; Email: www.nrdc.org
 Eric Uram, Sierra Club, T: +1 608 347-8008, www.sierraclub.org
 Rico Euripidou, groundwork, S. Africa T:+27333425662, www.groundwork.org.za
 Lisette van Vliet, Health & Environment Alliance; Health Care Without Harm Europe,
 T:+32 2 234 3645., www.env-health.org, www.noharm.org